

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀՈՎԻԻ ՔԱՋ ՉԱՆՉՆ ԻԻՐ ԴՆԷ Ի ՎԵՐԱՅ ՈՉԽԱՐԱՑ.

Յոմհ. Ժ. 11.

Բզկտուած, ծուատուած հայ ժողովուրդը այսօր աստանդական, թշնամուց և բարեկամից հալածուած, ցրուած հօտի է նման, որի հովիւները չկան:

Ո՛ւր գնացին, ի՞նչ եղան հովիւները, ի՞նչպէս կատարեցին իրենց պարտքը, արի-հովուական պարտքը: Ի՞նչո՞ւ հօտը ցրուեց. ո՞ւր են քաջ հովիւները:

Ահա Փրկիչը իր տիրական խօսքն է ուղղում ժողովրդի հովիւներին «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»:

Ու այդ հրամայական խօսքը անեղ դատաւորի պահանջ է, որ սարսուռ է ազդում ժողովրդի հովիւներին վրայ:

Հրապարակ եկէք—պատասխան տուէք, ասում է Նա—ի՞նչպէս կատարեցիք ձեր պարտքը, վերահաս վտանգի ժամին արդեօք լքեցի՞ք, թողի՞ք ու երե՞ս դարձրիք ձեր հօտից:

Արդեօք ինքնապաշտպանութեան բնազդը ձեր ոտքերին թռիչք տուեց, ձեր աչքերը գոցեց, ականջները փակեցիք ու խուլ, կոյր եղաք ձեր հօտի հառաչների, զրկանքների առաջ:

Ի՞նչպէս վեհ է հնչում իւր կեանքով քաջ հովուի օրինակը գերազանցապէս տուող Փրկչի խօսքը.

Եւ ի՞նչպէս մռայլ, թոյլ, տխուր արձագանք է տալիս մեր ներկայ իրականութեան մէջ Մեծ Վարդապետի անձնագոհութեան պահանջը:

Պատասխանատուութեան ժամն է հնչել և հովիւներից Տէրը հաշիւ է պահանջում, հաշիւ արդար, անողոք և խղճմտանքով. — Դժուարին, ծանր ժամն է վրայ հասել ու մարդկանց մի ներքին խռովութիւն է պատել:

Ու լսւում է այս ու այն անկիւններից, այս ու այն միջին տեղերից մի ընդհանուր տրտունջ, մի խուլ դժգոհութիւն:

Պատասխանատուութեան երկիւղն է պատել նրանց. լքուած հօտի բողոքի սարսափն է պատկերանում դրանց առաջ և այժմ են զգում ի՞նչ կնշանակէ հովիւ լինել. ի՞նչ ծանր պարտք է դրուած իրենց վրայ:

Ականջ դրէք, կարդացէք մեր մամուլը և կտեսնէք ի՞նչպէս այժմ միմեանց դէմ են ելել հովիւները ու փոխանակ իրենց քաջ հովուական պարտականութեան կատարման ապացոյցները հրապարակ հանելու, միմեանց վրայ են յանցանք բարդում, միմեանց յանցանքները մերկացնում, միմեանց մեղադրականներ կարդում:

Ի՞նչ ցաւալի, ի՞նչ տխուր տեսարան, ցրուած հօտի հովիւները հրապարակում մերկապարանոց կանգնած — ականատես իրենց հօտի անլուր թշուառութեան անէծքի տարափի տակ միմեանց օձիքն են բռնել. միմեանց վրայ յանցանքը բարդելու գործով են զբաղուած: Ո՞ւր է քաջ հովիւը, որ հրապարակ գայ ու խիզախօրէն ծառանայ այդ հովուի անունը կրելու տենչով բռնուածներին, բայց հովուի առաքինութիւնից թափուրներին մէջ. ցոյց տայ ո՞վ է հովիւը և ի՞նչպէս պիտի կատարէ նա իւր պարտքը:

Զկարծենք թէ Փրկչի խօսքը ուղղուած է սե վերարկուն հագածներին միայն: Ո՛չ, հովիւ է նա, ում վստահացած է որ և է համայնքի, հիմնարկութեան, հասարակական աշխատանքի վարելը:

Հովիւ է քահանան բեմի վրայ, սպան ռազմի դաշտում, ուսուցիչը ամբիոնին, խմբագիրը իր գրասենեակում, հասարակական գործիչը հասարակական աշխատանքում, հիմնարկութեան կառավարիչը հիմնարկութեան մէջ և այդպէս

անվերջ: Սրանց է ուղղուած Բարոյականութեան Մեծ Վարդապետի հօր կոչը այս մեր մռայլ կեանքի տխուր ժամին ու պատասխանի է սպասում, անձնագոհութիւն է պահանջում Մարդու Որդին քաջ հովուից. որի սքանչելի օրինակն է տուել իր կեանքով: Անձնագոհութիւնն է, որ հօտի պահպանութեան համար քաջ հովիւը պէտք է ցոյց տայ և ալիստով, իր պարտքը կատարէ:

Ամբողջի պահպանութեան համար անհատի կեանքի գոհաբերութիւնն է պահանջում և ով այդ առաքինութիւնն ունի, նա միայն քաջ հովիւ կոչուելու իրաւունք ունի.

Սեփական կեանքի գնով մերձաւորների վտանգից ազատելը պատմական օրէնքներից է և բարոյական մեծագոյն սկզբունքը: Այս մեծ սկզբունքի Տիրական Ներկայացուցիչ—ծնող Փրկիչն է գոչում.

—Կատարեցի՞ք ձեր հովուական պարտքը, ձեր հօտի վտանգի ժամին դրի՞ք ձեր անձը նրա փրկութեան համար, ցոյց տուի՞ք անձնագոհութեան այն մեծ սկզբունքը, առանց որի չկայ կեանք և յառաջադիմութիւն, չկայ գաղափարական աշխարհ:

Ու լսում ենք ողորմելի, թոյլ փափսոցներ այս ու այն տեղից, մեղքի մէջ բռնուածին յատուկ կցկտուր, հակասական խօսքեր, փոխանակ իրենց ապիկարութեան, տկարութեան խոստովանանքի, փոխանակ ներողութիւն խնդրելու Անհուն վշտով լցնում է հոգին մարդու հանդէպ այդ, երբեմն բարձրիզուլիս շանթեր թափող, երկնքի ու երկրի խորը քննելու հաւակնութիւն ունեցող, այժմ՝ Մեծ վարդապետի դատարանի առաջ, խեղճացած, լքուածների: Պատկերացրէ՛ք տեսարանը—ցրուած, փախստական, արնաքամ, վիրաւորուած, յոշոտուած հօտը, սրանց դիմաց գլխիկոր, գունատուած, խեղճացած հովիւներ, որոնք պարտականութեան սրբազան վայրը լքել ու փախել են ու ժողովրդին անտէր անտիրական թողել, այժմ էլ միմեանց են մեղադրում, ամաչում են անգամ ժողովրդին նայել և այդ երկու խմբի՝ հօտի և հովիւների մէջ բարձրանում է յաւիտենական ճշմարտութեան Քարոզչի՝ Մարդու Որդու

աննման բարոյական դէմքը, որ քաջ հովիւ է եղել ու իր անձը դրել հօտի վրայ:

Եւ այդ ժամին ինչքան խորը, ինչքան լիաբուռն, ինչպէս ուժգինս են ըմբռնում Փրկչի անձնաւորութեան մեծութիւնը, նրա մեծ խօսքի մեծ արժէքը:

Այստեղ աւելի քան ցայտուն, աչքի զարնող է երևան գալիս Փրկչի վարդապետութեան մեծութիւնը, յաւիտեանականութիւնը:

— Քաջ հովիւներ են պէտք, մեր ժողովրդի համար, որոնք Աւետարանի վարդապետի օրինակին հետևելով պատրաստ լինեն իրենց անձը դնելու հօտի համար:

Նոր այն ժամանակ վերածնունդ հայրենիքի արշալոյսը կերիզաւորէ երփներանգ շամանդաղով մեր չափազանց մռայլ հորիզոնը:

Գ. ա.

